# Անձնագրային տվյալների թարմացում առցանց հարթակում

IDBanking.am / Idram&IDBank

## Անձնագրային տվյալների թարմացում առցանց հարթակում

Հարգելի՛ հաճախորդ, այսուհետ, եթե Բանկի ծրագրում ունեք ժամկետանց անձը հաստատող փաստաթուղթ, Բանկային ծառայություններից օգտվելու համար **առցանց հարթակում** կարող եք կատարել անձնագրային տվյալների թարմացում՝ **առանց մասնաճյուղ այցելելու:**

Ինչպես նաև համակարգը առաջարկելու է անձնագրային տվյալների թարմացում, եթե վերջնաժամկետը մոտենում է:

Անձը հաստատող փաստաթղթի տվյալների թարմացման հնարավորությունից կարող եք օգտվել այն դեպքում, եթե սինքրոնացրել եք IDBank-ի և Idram-ի Ձեր հաշիվները և ունեք սոցքարտ:



# Ինչպե՞ս կատարել անձնագրային տվյալների թարմացում առցանց հարթակում

IDBanking.am հարթակում «Հաշիվներ»/ «Վարկեր»/ «Քարտեր»/ «Ավանդներ» բաժին մուտք գործելիս կբացվի կից հաղորդագրությունը՝ հաստատելու, որ ծանոթացել եք «Հրապարակային պայմաններ»-ին, որից հետո անհրաժեշտ է սեղմել «Թարմացնել» կոճակը :






# Ինչպե՞ս կատարել անձնագրային տվյալների թարմացում առցանց հարթակում

Հարգելի՛ հաճախորդ, եթե Ձեր անձնագրի վերջնաժամկետը մոտ է, համակարգը հաղորդագրության միջոցով տեղեկացնելու է **անձնագրի վերջնաժամկետի մոտ լինելու մասին:**



IDBank

# Ինչպե՞ս կատարել անձնագրային տվյալների թարմացում առցանց հարթակում

Անհրաժեշտ է ստուգել **«ԷԿԵՆԳ»** համակարգից ստացված վավեր անձնագրի տվյալները, հաստատել, որ վերը նշված բոլոր տվյալները ճիշտ են, սեղմել **«Հաստատել»** կոճակը։



Ամբողջական քայլերը անցնելուց հետո Դուք կստանաք **գործողության հաջողությամբ կատարման** վերաբերյալ հաղորդագրություն:



# Ինչպե՞ս կատարել անձնագրային տվյալների թարմացում առցանց հարթակում

Եթե Դուք դեռևս չունեք **վավեր անձը հաստատող փաստաթուղթ**, ապա կստանաք կից հաղորդագրությունը։



# Ինչպե՞ս կատարել անձնագրային տվյալների թարմացում առցանց հարթակում

Հարգելի՛ հաճախորդ, եթե Բանկում առկա ծննդյան ամսաթիվը/սոց. քարտը տարբերվի ՀՀ ոստիկանության տվյալների բազայում առկա տեղեկատվությունից, ապա կստանաք կից հաղորդագրությունը:



# Ինչպե՞ս կատարել անձնագրային տվյալների թարմացում առցանց հարթակում

Հարգելի՛ հաճախորդ, եթե չունեք **սոցքարտ**, ապա կստանաք կից հաղորդագրությունը:

> 🇦🇲 Ձեր անձը հաստատող տվյալների թարմացումը հնարավոր չէ իրականացնել առցանց: Թարմացման համար խնդրում ենք զանգահարել IDBank կամ մոտենալ IDBank-ի մասնաճյուղեր:

# Անձնական տվյալների թարմացում առցանց հարթակում

Idbanking.am / Idram&IDBank

IDBank

# Անձնական տվյալների թարմացում առցանց հարթակում

✓ Հարգելի՛ հաճախորդ, անձնական տվյալների թարմացման հնարավորությունից կարող եք օգտվել այն դեպքում, եթե **սինքրոնացրել եք IDBank-ի և Idram-ի Ձեր հաշիվները**:

Համաձայն բանկի ներքին քաղաքականության՝ անհրաժեշտ է պարբերաբար կատարել անձնական տվյալների թարմացում, մասնավորապես՝

- ռեզիդենտության երկիր
- բնակության հասցե
- աշխատավայր
- պաշտոն
- կրթություն
- ընտանիքի անդամների քանակ
- կրթօջախ
- քաղվածքի ստացման լեզու
- հաշիվներով գումարների ամսական շրջանառության չափ
- բանկային հաշիվներին առկա միջոցների ծագման աղբյուր
- գործարար հարաբերության նպատակը (բանկային ծառայություններ, որոնցից մտադիր է օգտվել հաճախորդը)



# Ինչպե՞ս կատարել անձնական տվյալների թարմացում առցանց հարթակում

**IDBanking.am** հարթակում «Հաշիվներ»/ «Քարտեր»/ «Վարկեր»/ «Ավանդներ» բաժին մուտք գործելուց հետո Ձեզ մոտ կարտացոլվի կից հաղորդագրությունը, որից հետո անհրաժեշտ է սեղմել **«Թարմացնել»** կոճակը:



IDBank

# Ինչպե՞ս կատարել անձնական տվյալների թարմացում առցանց հարթակում

Անհրաժեշտ է տալ համաձայնություն **«Հրապարակային պայմաններին»**, ապա սեղմել **«Թարմացնել»** կոճակը



# Ինչպե՞ս կատարել անձնական տվյալների թարմացում առցանց հարթակում

Հարգելի՛ հաճախորդ, Դուք ունեք հնարավորություն փոփոխելու ցանկացած անձնական տվյալ, բացառությամբ էլ. հասցեի: Միջոցների ծագման աղբյուրը և գործարար հարաբերության նպատակը դաշտերում առկա է *«Այլ»* տարբերակ նշելու հնարավորություն, որտեղ Դուք կարող եք ձեռքով մուտքագրել այն տարբերակը, որը Ձեզ չի առաջարկվել:

Ամբողջական տվյալները լրացնելուց հետո անհրաժեշտ է սեղմել **«Թարմացնել»** կոճակը, այն հաստատել PIN կոդով, որից հետո Ձեր անձնական տվյալները Բանկում առկա ծրագրերում ավտոմատ կերպով կփոփոխվեն:



# Շնորհակալություն ուշադրության համար

IDBank